Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԵՑ-1 պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 1. Երևան - 1 ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.-30.06.2024թթ. |
| Ներկայացման օր | 08.07.2024թթ |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2024.07.08
15:36:32 AMST

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.
- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 52 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է, 29 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 8 խմբակ՝
  - «Գրական» խմբակ
  - «Երգի» խմբակ,
  - «Կինեզալոգիայի»,
  - «Հմուտ ձեռքեր»,
  - «Կարի»,
  - «Հոգևոր զրույցներ»,
  - «Առողջ ապրելակերպ»
  - «Աշուղական խմբակ»

որին մասնակցել է 51 շահառու:
Կազմակերպվել է թվով 63 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 51 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝
  - Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոն,
  - Հայ մեծանուն գրող Համո Սահյանին նվիրված միջոցառում,
  - Համբարձման տոն
  - Շառլ Ազնավուրի ծննդյան 100 ամյակ

- Կազմակերպվեց միջոցառում՝ իրենց իսկ նախաձեռնմամբ
- Աղջանների պատրաստման մրցույթ
- «Ոսկե սերունդ» սոցիալ-կրթական ամառային ճամբարին մասնակցություն
- «Արամ Խաչատրյան» համերգասրահ, «Ք Պենդերեցկու անվան ժամանակակից երաժշտության» փառատոնի հերթական համերգ,
- «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հերթական համերգ,
- «Արամ Խաչատրյան» համերգասրահ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի և Հայաստանի ազգային երգչախմբի միացյալ համերգ,
- «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի՝ Ք Պենդերեցկու անվան ժամանակակից երաժշտության հերթական համերգը
- «Առնո Բաբաջաբյան» համերգասրահ, Հայաստանի ազգային նվագարանների պետական նվագախմբի համերգը,
- «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգ,
- «Առնո Բաբաջաբյան» համերգասրահ, «Գուսան անսամբլի համերգը նվիրված Վ. Բալյանի 100 ամյակին համերգ,
- «Կամերային երաժշտության տուն», «Տաղարան» համույթ՝ ֆրանկագոնյային նվիրված համերգ
- «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Հայաստանի պետական կամերային նվագախմբի և 2 կամերային երգչախմբերի համատեղ համերգ,
- «Արամ Խաչատրյան» համերգասրահ, ջութակահար Ն. Մադոյանի և դաշնակահար Ն. Մնդոյանցի համերգ,
- «Արամ Խաչատրյան» համերգասրահ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի, ջութակահար Ս. Խաչատրյանի հետ համատեղ համերգ
- «Առնո Բաբաջաբյան» համերգասրահ, «Ակունք» ազգագրական համույթի համերգը
- «Կամերային երաժշտության տուն», Երևանի պետական կամերային երգչախմբի «Գարուն ա…»,խորագրով համերգին
- «Առնո Բաբաջաբյան» համերգասրահ, Հայաստանի ազգային նվագարանների պետական նվագախմբի «Արմենիա» խորագրով համերգը,
- «Առնո Բաբաջաբյան» համերգասրահ, Գյումրու պետական սիմֆոնիկ նվագախմբի և կոնսերվատորիայի սաների համերգը նվիրված Վ Բալյան 100 ամյակին
- «Կամերային երաժշտության տուն», «Տաղարան» համույթ՝ Բարոկ և դասական երաժշտության համերգ,
- Երևան բալետ ֆեստ՝ Թումանյանի այգի Սանկտ Պետերբուրգի Բ. Էյֆմանի բալետի ներկայացում, Երևանի քաղաքապետարանի կողմից հատուկ հրավիրված
- Երևան բալետ ֆեստ՝ Թումանյանի այգի Ա. Սպենդարյանի անվան ազգային թատրոնի «Կարապի լիճ» բալետ,
- Երևան բալետ ֆեստ՝ Թումանյանի այգի, Թբիլիսիի ազգային բալետի ներկայացում
- «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Ա Խաչատրյանի անվան 20-րդ միջազգային մրցույթի բացման համերգը
- «Արամ Խաչատրյան» համերգասրահ, «Երևան» պատանեկան սիմֆոնիկ նվագախմբի անդրանիկ համերգ,
- «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Ա Խաչատրյանի անվան 20-րդ միջազգային մրցույթի պարգևատրման արարողությունը և գալա համերգ,
- Սպենդարյանի անվան օպերայի և բալետի ազգային թատրոն, Սանկտ Պետերբուրգի պալատներ, միջազգային երաժշտական փառատոն նվիրված Ֆ. Շալյապինի 100 ամյակին համերգ,
- «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի «Օպերայի ուրվականը» խորագրով սիմֆոնիկ համերգ,
- «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Սանկտ Պետերբուրգի պալատներ միջազգային փառատոնի հաղթողների գալա համերգ

- Հայաստանի կույրերի միավորման Ս. Շահնազարյանի անվան մշատույթի տան դահլիճ՝ Կույրերի միավորման երգչախմբի և ժող գործիքների նվագախմբի համերգը՝ նվիրված երաժշտության օրվան
- «Ապրիլի 7»՝ Մայրության և Գեղեցկության տոնի նշում,
- Ծննդյան տոների նշում,
- Ներգնա Տուր Արագածոտնի մարզ՝ քաղաք Ապարանի Սուրբ Խաչ եկեղեցի, Սաղմոսավանք, Ապարանի հուշարձան,
- Հյուրընկալում «Փոքրիկ Իշխան» կրթահամալիրի սաներին,
- 1915թ-ի Ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող միջոցառում՝ նվիրված եղեռնազարկ մեր ժողովրդին. ընթերցվեց Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմը,
- «Գրական ակումբ» խմբակի շրջանակներում անցկացվեց բաց դաս՝ նվիրված Հովհաննես Շիրազի 110-ամյակին,
- Հյուրընկալում «Փոքրիկ Իշխան» կրթահամալիրի սաներին, ովքեր կամավորական աշխատանքներ իրականացրեցին ցերեկային կենտրոնում,
- «Մայիսի 9-ը» խորագրով դասընթաց «Հմուտ ձեռքեր» խմբակի շրջանակներում,
- Միջոցառում նվիված երեխաների պաշտպանության օրվան, այց «Զատիկ» մանկատուն,
- Ներգնա տուր դեպի Կոտայքի մարզ՝ Ծաղկաձորի Կեչառիս եկեղեցի եւ դեպի Հրազդան՝ Շառլ Ազնավուրի անվան զբոսայգի,
- Ներգնա տուր դեպի Վայոց ձորի մարզ՝ քաղաք Ջերմուկ՝ Սուրբ Գայանե եկեղեցի, «Ջրահարսի վարսեր» ջրվեժ, հանքային ջրերի ըմպելասրահ,
- «Երաժշտական հարթակ» խորագրով ՀԿՄ «Երաժշտական կոլեկտիվներ»-ի երգչախմբի եւ ժող. գործիքների նվագախմբի համերգ,

- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 45 հանդիպում (մասնակիցների թիվ՝ 51 )՝ ուղղված անձնային աճին, կենսական ակտիվ ինքնորոշման խթանմանը, հոգեկան ոլորտների ակտիվացմանը, գիտելիքների ձեռքբերմանը: Իրականացվել է նաև մանր մոտորիկայի, հիշողությանն ու մտածողությանն ուղղված նյրոբիկ վարժություններ, նկարչաթերապիա, ինչպես նաև ֆիզիկական ակտիվությունը խթանող խաղեր: Իրականացվել են առակների հոգեբանական վերլուծություններ, սոցիալական ընկալման ուղղված վարժություններ, խմբի սոցիալ-հոգեբանական մթնոլորտի բարելավմանն ու միախմբմանն ուղղված խաղեր
- Ցերեկային կենտրոնում բուժքրոջ կողմից իրականացվել է թվով 51 շահառուի զարկերակային ճնշման չափում, թվով 6 շահառուի գլյուկոմետրիա, թվով 51 շահառուի սատուրացիայի ստուգում, թվով 5 շահառուի ներարկում, ինչպես նաև հիգիենայի կանոնների վերահսկում, սննդի ստուգում և շաբաթական մեկօրյա գրաֆիկով առողջ ապրելակերպի վերաբերյալ դասընթացի կազմակերպում:

- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- Թվով 9 շահառու օգտվել է բաղնիքի ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոն (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/uqkyf ),
- Հոգևոր զրույցներ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/uqlfk ),
- Հայ մեծանուն գրող Համո Սահյանին նվիրված միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/uqlva)
- Հմուտ ձեռքեր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/uqlzl , http://surl.li/uqmgr ),
- Հիշողության ակումբ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/uqmaw, http://surl.li/uqmdd )
- Ախորժելի կարկանդակներ, թխվածքաբլիթներ, իհարկե, ուրախ երգուպարով համեմված (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/uqmbh )
- Համագործակցություն Կալիֆորնիա նահանգից ժամանած գործընկերոջ հետ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/uqmeh )
- Համբարձման տոն (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/uqmfu )
- Շառլ Ազնավուրի ծննդյան 100 ամյակ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/uqmjn
- Կազմակերպվեց միջոցառում՝ իրենց իսկ նախաձեռնմամբ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/uqmkd )
- Երգի խմբակ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/uqmnb )
- Աղցանների պատրաստման մրցույթ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/uqmqw )
- <<Ոսկե սերունդ>> սոցիալ-կրթական ամառային ճամբարին մասնակցություն (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/uqmsv )
- Երևանի քաղաքապետարանի հրավիրմամբ Ակրամ Խան Ժիզել բալետ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/dnzbpy )
- Կենտրոնում նշել է Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարության տոնը՝ Սուրբ Զատիկը:

(տե՛ս հետևյալ հղմամբ՝ ,http://surl.li/tkuwzd, http://surl.li/gnvjkk )

- Տոնական միջոցառումով ամփոփեցինք կանանց միամսյակը

(տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/maffbp )

- Գեղարվեստական միջոցառում նշանաբանը՝ ՏՈՒՆ, ԸՆՏԱՆԻՔ, ՀԱՅՐԵՆԻՔ

(տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/qvkuyy)

- Ստեղծագործական աշխատանքն ունի հոգեթերապևտիկ, հոգեշտկող, ինքնաճանաչման նշանակություն: Ստեղծագործում են կենտրոնի տարեցները

(տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/cviplc )

- Միջոցառում նվիրված Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարության տոնին՝ Զատկին(տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/vskhba)
- «Հմուտ ձեռքեր» խմբակի շրջանակներում տարեցների պատրաստած բեմազարդերը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rsiebl)
- Հյուրընկալում Երևանի պետական մանկավարժական համալսարանի ուսանողներին, «Ապրիլի 7»՝ Մայրության և Գեղեցկության տոնի նշում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rprrcz)
- Ծննդյան տարեդարձերի տոնում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/bccatg)
- Ներգնա տուր դեպի Արագածոտնի մարզ՝ քաղաք Ապարան, Սաղմոսավանք, (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ceagzn)
- Հյուրընկալում «Փոքրիկ Իշխան» կրթահամալիրի սաներին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/gpuczk)
- Ցերեկային կենտրոնում իրականացավ միջոցառում՝ նվիրված եղեռնազարկ մեր ժողովրդին. (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/plmftv)
- «Գրական ակումբ» խմբակի շրջանակներում անցկացվեց բաց դաս՝ նվիրված Հովհաննես Շիրազի 110-ամյակին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/xhijpw)

- Կամավորական աշխատանքների իրականացում «Փոքրիկ Իշխան» կրթահամալիրի սաների կողմից (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/bzuepb)
- Մայիսի 9-ը» խորագրով դասընթաց «Հմուտ ձեռքեր» խմբակի շրջանակներում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/xneuyo)
- Բացիկների պատրաստում «Հմուտ ձեռքեր» խմբակի շրջանակներում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/hubzkr )
- դասընթաց նվիրված Շառլ Ազնավուրին «Գրական ակումբ» խմբակի շրջանակներում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/whihvs)
- Միջոցառում երեխաների պաշտպանության տոնի առթիվ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/zragya)
- Էքսկուրսիա դեպի Կոտայքի մարզ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/zragya)
- Ներգնա տուր դեպի Վայոց ձորի մարզ՝ քաղաք Ջերմուկ, նաև Նորավանք (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/oljnxj)
- Հեքիաթների վերլուծություն «Գրական ակումբ» խմբակի շրջանակներում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/wxqjbd)
- Թղթե ոլորքներով վարագույրի պատրաստում «Հմուտ ձեռքեր» խմբակի շրջանակներում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/zxoywd)
- «Սասունցի Դավիթ» էպոսի, մասնավորապես Դավթի կերպարի քննարկում Գրական ակումբ» խմբակի շրջանակներում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ukmlhn):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտաթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- Առաքելություն Հայաստան ԲՀԿ-ի կողմից կազմակերպված «Տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների տրամադրում» «Դեպքի

վարման մեթոդապանությունը» թեմայով դասընթաց, մասնակցել են ցերեկային կենտրոնի սոցիալական աշխատողները

- WHO, UN-DESA and INPEA –ի կողմից կազմակերպված «Տարեցների նկատմամբ վատ վերաբերմունք» թեմայով վեբինարի, Նոր Նորք և Ավան սոցիալական աշխատանքի սուպերվիզորը
- Շվեյցարիայի Լյուցերնի համալսարանի և Հայաստանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի միջև համագործակցության արդյունք է, որին օժանդակում են մի շարք գործընկերներ, այդ թվում ԱՀԿ եվրոպական և հայաստանյան գրասենյակները «Վերականգնողական ծառայությունների միջոցով առողջ ծերացման խթանումը Հայաստանում» առողջապահական համակարգի ուսուցման մոտեցման կիրառմամբ սոցիալական աշխատանքի սուպերվիզորը
- ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից կազմակերպված «Տարեցների սոցիալական աջակցության ծառայությունների մեթոդաբանական ասպեկտները», «Հումանիտար և զարգացման համատեքստում տարեցներին աջակցելու լավագույն միջազգային փորձը», մասնակցել է Նոր Նորքի սոցիալական աշխատողը
- Ֆոկուս խմբի «ՖՄԴ-ի կոռուպցիոն ռիսկերը» մասնակցել են սոցիալական աշխատողներն ու սոցիալական աշխատանքի սուպերվիզորը
- Մայիսին հոգեբանը անհատական նախաձեռնությամբ մասնակցել է «Հայկական հոգևոր վերականգնման» հիմնադրամի կողմից կազմակերպված 18 ժամ տևողությամբ «Նարատիվային թերապիա» խորացված դասընթացին:

- Հունիսին հոգեբանը անհատական նախաձեռնությամբ մասնակցել է «ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոնում» կազմակերպված «Բրեյնսփոթինգ» միջազգային ինտենսիվ դասընթացին:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 51/51 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 44 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 7 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 5 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 7 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 44 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 51 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 3 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 51 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 51 |
| 5.1 | Նշել խմբակի անվանումը՝ Կինեզալոգիա | 35 |
| 5.2 | Նշել խմբակի անվանումը՝ «Գրական | 45 |
| 5.3 | Նշել խմբակի անվանումը՝« Երգ» | 50 |
| 5.4 | Նշել խմբակի անվանումը՝ «Հոգևոր զրույցներ» | 45 |
| 5.5 | Նշել խմբակի անվանումը՝ «Հմուտ Ձեռքեր» | 40 |
| 5.6 | Նշել խմբակի անվանումը՝ «Կարի լաբ» | 4 |
| 5.7 | Նշել խմբակի անվանումը՝ «Աշուղական խմբակ» | 18 |
| 5.8 | Նշել խմբակի անվանումը՝ «Առողջ ապրելակերպ» | 45 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 51 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 32 |
| 7. | Այլ ծառայություն (Բաղնիքից օգտվել է շարունակաբար) | 9 |

Կազմակերպության ղեկավար <u>Երվանդ Մխիթարյան</u> «08» 07.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)